

վեցհազարեակի արուեստ ալ դնել  
արժանի համարեր է : Ի՞յլ ուրիշ  
տեղ մըն ալ, ինչպէս վերը ըսինք,  
տասուերկու հազար տարուան մար-  
գարէութի ընել կը խոստանայ . ուս-  
տի ինչ ըսել կ'ուզէ՝ կրնաս նէ ի-  
մացիր :

Ի՞չա ասոնք են այն երեւելի գրքին  
մէջի եղած խորին գիտութիւնը, որ  
ոմանք միամիտ մարդիկ գուցէ կար-  
գալով և բան մը չկրնալով սորվիլ, ի-  
րենց անմտութեանը կուտան . այլ  
ամենեին չցաւին այս բանիս վրայ .  
զի ոչ ոք կարօղ է և ոչ կրնայ ըլլալ  
բան մը ըմբռնել և իմանալ : Օի  
տես որ հին օրինակօղին մէկն ալ, որ  
փոյթ տարեր է գրելու և սորվելու,  
ան ալ կը վկայէ ու կը խոստովանի որ  
բան մը չէ կրցեր հասկրնալ և սորվիլ,  
այսպէս նշանակելով լուսանցը, թէ  
Ի՞ազում աշխատ եղաք, և ոչինչ կա-  
լաք . մի միայն Ճշմարիտ խօսքն որ բո-  
լոր գրքին մէջ կը գտնես : Իշ որով-  
հետեւ գրքին սկիզբէն մինչև վախճա-  
նը ստութիւն և խաբէութիւն է,  
ուստի այս Ճշմարիտ խօսքս ալ չեր  
վայլէր հեղինակին բերանը . ինչպէս  
որ ալ հեղինակինը չէ :

Չատ աղէկ կ'ըլլար որ այս գիրքս  
Հայաստանու մէջ գործածուած կա-  
խարդութեանց անունները և ինչպէս  
գործադրուիլը պատմէր . գոնէ ասով  
մէզի մէկ տեղեկութեան և հմտու-  
թեան նիւթ մը կ'ըլլար : Ի՞այց միթէ  
իւնթ և տգէտ մարդէ մը օգուտ  
կրնայ մի յուսացուիլ :

\* \*

Նուբագւարուսուագը նոր տգիտութիւն մըն է՝  
միր բնական տգիտութեանը վրայ պատուաստած .  
բնականին պատուզն է ցաւալի խեղձութիւն, պա-  
տուաստածինը նաև զլուելի ու գժուարաբուժե-  
լի հիւտնդութիւն :

## ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

### ԱԶԳԱՑԻ ՄԱՏԵՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ո՞եր աշխարհաբառին նշջ մրած տանի մը օ-  
դարանքի մասնիչներու կըայ : — Լոր, Ո՞ի :

ՃՇՄԱՐԻՏ է որ ինչ և իցէ լեզու  
մը յստակ մաքուր և ազնիւ ըսուելու  
համար՝ բաւական չէ որ օտարազգի  
բառերը գուըս ձգէ ըստ կարի, հա-  
պա պէտք է որ օտար լեզուի ոճեր  
կամ դարձուածքներ ալ չունենայ :  
Ուստի մեր աշխարհաբառ լեզուն ալ  
եթէ կ'ուզենք մաքրել ազնուացընել  
ու գրաբառին կամաց կամաց մօտե-  
ցընել, բաւական չէ միայն տաճկի  
կամ ուրիշ լեզուի բառ ըրանեցընելը,  
պիտի նայինք որ օտար ոճ կամ դար-  
ձուածք ալ չգործածենք : Տարակոյս  
չկայ որ աս աշխատանքը, այսինքն օ-  
տար լեզուի դարձուածք և ոճ չըա-  
նեցընելը շատ աւելի դժուար է՝ քան  
թէ օտարազգի բառերէն զգուշանա-  
լը . ինչ կ'ըսեմ դժուար . անկարելի  
ալ է մէկէն 'ի մէկ փոխել աս մեր աշ-  
խարհաբառին ոճը՝ թէ որ կ'ուզենք  
որ գրածնիս կամ խօսածնիս հասկը-  
ցուի . և սակայն ան բանն որ մէկէն  
չըլլար, կամաց կամաց շատ գիւրաւ  
կը յաջողի : Ի՞ս նիւթիս վրայ խօսքը  
երկընցընելը աւելորդ կը համարինք  
հոս տեղս . մանաւանդ որ գեռ նոր  
կարգացած են մեր ուսումնասէր ըն-  
թերցողքը Ի՞ազմավիալիս փետրուար  
ամսուն մէջ ամբողջ կատակերգու-  
թիւն մը այնպիսի խառնավնդոր լե-  
զուով ոճով գրուած, և անշուշտ ի-  
րենք ալ Ի՞ազմավիալիս գե-  
ղեցիկ խորհրդածութիւնն ընելով՝  
թերեւ ոչ այնչափ ծիծաղած ըլլան  
նիւթին ծաղրականութեան, որչափ  
զուրցուածքին խառնակութելը վրայ,  
գիտնալով որ խաղին նիւթը ըստ մա-  
սին շինծու ալ է նէ՝ անոր լեզուին  
խառնակութիւնը ցաւալի Ճշմարտու-

թիւն մըն է . թէպէտ և առանց այն պիսի լեզուի այն խաղը չէր ըլլար բնական , ուստի և ոչըստ կանոնի :

Արդ մեր աշխարհաբառը կամաց կամաց մաքրելու համար հարկ է որ ջանանք ոչ միայն օտարազգի բառերուն տեղը բուն ազգային բառեր բանեցրնել , հապա նաև օտարազգի մասնիկները դուրս ձգել ըստ կարի մեր աշխարհաբառէն , որովհետև լեզուի մը ոճը շատ կը փոխուի մէջ մասնիկներուն զօրութեամբը : Ի՞նոր համար ալ ըստ կար դուրս ձգելու է կ'ըսենք . ապա թէ ոչ կրնայ ըլլալ որ ամէն օտար մասնիկներն ու դարձուածքները մէկէն փոխելու ըլլանք նէ , լեզուին ոճն ալ շատ փոխուի ու անհասկանալի ըլլայ : Հիմա տեսնենք թէ որոնք են աս մասնիկները :

Իմենէն աւելի գործածուածը , մանաւանդ Պօլսեցւոց լեզուին մէջ , ի՞ր մասնիկն է . և ասիկայ այնպէս սովորական դարձած է որ շատը կարծեն թէ հայերէն է : Բայց տարակոյս ըրկայ որ աս ի՞ր բառը տաձկի էօր մասնիկն է , որ բայերուն ներկայ ժամանակը խիստ մօտիկ ու շարունակեալ կը ցուցընէ . ուստի տաձիկն որ կ'ըսէ իէլիյօր , մերոնք կ'ըսեն կուգայ ի՞ր , կամ կուգայ էօր և կամ կուգայ էր . իէօրէյօր , մերոնք կ'ըսեն իը տէսնայ ի՞ր , իը տէսնայ էօր , իը տէսնէ էր . օգույօրբում , մերոնք կ'ըսեն իը հարդայի ի՞ր , իը հարդայի էօր , իը հարդայի էր , և այն :

Ովոլորաբար ի՞ր ըսողները աւելի Պօլսեցիք են , իսկ էօր կամ էր բանեցընողները աւելի դրսեցիք . բայց գրեթէ ասոնք ամէնքն ալ մոքերնին դրբած են թէ առանց աս մասնիկը բանեցընելու չեն կրնար իրենց միտքը չիշդ հասկըցընել : Տեսնենք թէ չըշմարիտ է աս իրենց կարծիքը :

Տաձկաց էօր մասնիկը իրենց լեզուին հարստութիւններէն ու փափկութիւններէն մէկն է . վասն զի ասիկայ այնպիսի նշանակութիւն մը կուտայ բայերուն ներկայ ու անկատար ժամանակներուն՝ որ գործողու-

թիւնը կարծես թէ շարունակութը մը հանդերձ աչքիդ առջելը կը բերէ . զոր օրինակ եաղաբը ըսէնէ կ'իմանաս թէ իը գրեմ կ'ըսէ , բայց չես իմանաս թէ հիմա կ'ըսէ կ'ըսէ կամ գրելու վրայ էմ ըսել կ'ուզէ , չէ նէ ետք , չէ նէ կուզէ գրել կամ պիտի գրեմ . իսկ երբոր եաղայուած ըսէ , մէկէն կը հասկընաս որ ակա իը գրեմ կամ գրելու հէտ էմ ըսել կ'ուզէ . և ահա աս երկրորդին յարմարցուցեր են մերոնք իը գրեմ ի՞ր ըսելը : Ուրեմն աս ի՞ր մասնիկը զարդ փափկութիւն ու հարստութիւն մըն է նաև մեր աշխարհաբառին . բայց միանգամայն շմունալու է որ ուրիշէն փոխ առնուած զարդ , անյատուկ փափկութիւն և մուրացուած հարստութիւն է , ինչպէս որ ցըցուցինք . արդ մենք պէտք է աս մասնիկը պահենք մեր լեզուին մէջ թէ դուրս ձգենք . — աս է քննելիքը :

Ուեր կարծիքն ու պատասխանը ասէ . առ ի՞ր որ մեր լեզուին յստակութեանը վնաս չսեպէինք այսպիսի փափուկ մասնիկներ ու հարստութիւններ մուրալը օտար լեզուներէ , ուրիշ որչափ բառեր ու մասնիկներ ալպէտք էր առնէինք՝ ոչ միայն տաձկի լեզուէն , հապա նաև ուրիշ ամէն լեզուներէ . օրինակի համար՝ Յունաց լեզուէն մէն մասնիկը , լատինէն զուգութ իտալերէնէն ուսա, գաղղիարենէն բան , անգղիարենէն տօ , ուսւերենէն բան և այլն և այն , որ ամէնն ալ իրարմէ շատ տարբեր՝ մէյմէկ գժուարաթարգմանելի փափկութիւններ ու հարըստութիւններ են իրենց լեզուներուն , ինչպէս որ նոյն լեզուները լաւ գիտցողները կը վկայեն : Բայց իրաւցընէ մեծ վնաս կ'երեւնայ մեզի այսպիսի օտար բառերով լեզունիս զարգարել Եասկպոսի ագռաւելին պէս . ու աւելի մեծ վնաս՝ քան թէ հասարակ բառեր մուրայինք ուրիշներէն . վասն զի ինչպէս որ ըսինք՝ աս մասնիկներով լեզուին ոճը կը փոխուի ու կ'աւրուի : թ . Ի՞սանց ի՞ր մասնիկը բանեցընելու չենք կրնար որդեօք անոր տուած

իմաստը գոնէ մօտ կերպով մը բացա-  
տրել մեր բառերով կամ մեր բառե-  
րուն դարձուածքով : Ալ վկայեն  
կարդացողները թէ ուրիշ շատ գր-  
րուածքներէ զատ՝ մենք ալ Շազմա-  
վիպիս ինչուան հինգերորդ տարւոյն  
կէսը հասանք աւասիկ՝ գրեթէ ամե-  
նեին կոր մասնիկը քաննեցրնելով . և  
սակայն խօսքերնիս ոչ միայն հասկը-  
ցուեցաւ , այլ նաև բազմաց չափաւո-  
րապէս հաճոյացաւ . բայց հոս ալ  
քիչ մը քննենք : ( Ճրինակի համար՝  
հարցընէ մէկը թէ ի՞նչպէս կրնաս ը-  
սել առանց կորի աս տաճկերէն իմաս-  
տը . պէս ուսոյլէյօրում ամստ ուն աղնամայօր-  
ուան . — թէ որ այսպէս թարգմա-  
նեմ , ես կ'ըսէմ բայց դու չս հասկնար ,  
դիմացինս կրնայ ըսել թէ Սեղաւ .  
ան տաճկերենին մէջ ուրիշ կենդա-  
նութիւն մը կայ որ հայերէնը չունի :  
— Ճշմարիա է . բայց նախ մենք գիտ-  
նալով թէ աս կենդանութիւնը կամ  
փափկութիւնը մեր լեզուն իրաւցընէ  
չունի , ըսինք թէ գոնէ նոր կերպով մը  
նոյն իմաստը բացատրելով գոհ պէտք  
է ըլլանք . երկրորդ՝ եթէ քիչ մը աշ-  
խատինք՝ կրնանք այնպէս դարձընել  
խօսքը որ աւելի ալ մօտենայ հայերէ-  
նին իմաստը տաճկերենին . զոր օրի-  
նակ կրնանք թարգմանել այսպէս .  
ահա ես կ'ըսէմ , բայց դու չս հասկնար :  
Եւ ահա աս կերպով կոր մասնըկին  
գործածութիւնը չայելու և հաքիտոր  
ըլլալը ցուցընելէն ետև , կը յուսանք  
որ մեր լեզուին յատակութեանը փոյթ-  
ունեցող անձինք կը հաւանին , ու մե-  
զի հետ աս օտար՝ խորթ ու նաև կոշտ  
մասնիկը դուրս կը ձգեն մեր աշխար-  
հաբառէն :

Դվերայ այսր ամենայնի , ինչպէս որ  
բարոյական ու բնական ամէն գործո-  
ղութեց մէջ ալ խոտորմունքներ կ'ըլ-  
լան երբեմն , ու հարկ է որ ըլլան՝ նոյն  
գործողութեանց աղէկութեանը հա-  
մար , և ինչուան գրաբառին մէջ ալ  
օտարազգի բառեր ու սմեր հարկ կ'ըլ-  
լայ երբեմն խառնել կամաւ և ակա-  
մայ , այսպէս ալ՝ մանաւանդ թէ ես

առաւել՝ աշխարհաբառ լեզուին մէջ  
որ դեռ հաստատուն ձեի ու կանոնի  
մը չէ դրուած՝ շատ հարկաւոր երե-  
ցած ժամանակը աս էրը և ասոր նման  
մասնիկներ բանեցընելը պակասու-  
թիւն մը չենք սեպէր :

Դանք մէկ ուրիշ մասնիկ մըն ալ  
քննելու որ առջինին գրեթէ հաւա-  
սար հարկաւոր կ'երևնայ , ու նոյնպէս  
ալ շատ կը գործածուի . և ասիկայ է  
Գ կամ Տ Հարցական մասնիկը . զոր  
օրինակ ուսու՞ Գ , Ճ Ճ Ն Ն , և  
այլն : Ա Ե Ր ՚Ի Վերոյ նայողին այնպէս  
մը կ'երևնայ թէ ասիկայ հայերէն է  
ու գրաբառ ալ է . և տաճկի Գ մաս-  
նիկէն աս տարբերութիւն միայն ունի  
որ գրաբառին մէջը Գն բայէն առաջ  
կը գրուի , իսկ տաճկերենին՝ ու անկէ  
մեր աշխարհաբառին մէջ ալ՝ բայէն  
ետքը . զոր օրինակ , գրաբառ՝ Գ Է Հ Յ Ի .  
տաճկերէն՝ Խ Ը Ր Ւ ՞ Գ . աշխարհաբառ՝  
Ե Կ Ո ՞ Գ : Ո Ւ է որ իրաւցընէ այսպէս  
ըլլայ , այսինքն թէ որ Գ հարցական  
մասնիկը յատուկ հայերէն է , ու միայն  
տեղը փոխուելով՝ առաջ գրուելու  
տեղը ետքը գրուեր է , ըսել է թէ օ-  
տար բառ Ճ Ճ , ուստի մեր լեզուին  
յստակութեն ալ գէմ չիգար : Բայց  
թէ որ տաճկերէն է , ինչպէս որ հաս-  
տատութեամբ կը կարծենք , պէտք է  
որ դուրս ձգենք : Հիմայ տեսնենք  
թէ մեր կարծեաց ապացոյցները ո-  
րոնք են :

Ո՞ք մակրայը , ինչպէս որ յայտնի է ,  
մեր լեզուին մէջ բացասական է և  
արգելական , ինչպէս նաև յունարէն  
մղ ( Գ ) , պարսկերէն Ֆ , և տաճկերէն  
Ֆ և Ֆ մասնիկները . սովորաբար մեր  
գրաբառին մէջ բայէն առաջ կը գը-  
րուի , բայց շատ անգամ ալ ետքը .  
զոր օրինակ Ֆ Ռ Ո Ւ Շ Ե Ւ Ց Ֆ . Խ Ե Ւ Ց Ֆ . իսկ  
յօյնն ու պարսիկը միշտ բայէն առաջ  
կը դնեն աս արգելական մասնիկը , և  
տաճկեր միշտ ետքը , զոր օրինակ Ո Ւ-  
Ց Ֆ , Է Վ Հ Յ Ֆ : Բայց Ե Ր Բ Ե Ֆ աս մեր Ֆ  
մակրայը ( ինչպէս նաև Յունաց )  
հարցական իմաստ ունեցող բառերու  
հետ ալ կը գործածուի . ասով կը կար-

ծուի թէ ան բառերուն հարցականի սյժ տուողը անիկայ է . որ այսպէս չէ :

Տաճկերենին յետադաս կ' մասնիկը ըլլայ նէ , բայ մը չկրնար հարցական ըլլալըստ կանոնի . զոր օրինակ պարզ տէտի ըլլա նէ՝ տաճկի ո՛չ չէ , տէտի կ' պիտի ըսես որ հարցական ըլլալը հաս կըցուի : Իսկ հայերէն կ' մակրայը քովի բառերուն հետը ըլլայ ալ նէ , անոնք իրենց հարցական զօրութիւնը ունին . զոր օրինակ տաշցէր , ըսէր . միայն թէ երբոր կ' կամ մինէ մասնիկը դրուի նէ՝ ուժերնին կ' աւելնայ :

Ո ասն զի ( և ահա աս է մեր և ըն-թերցողին լաւ դիտելիքը ) կ' մակրայը այսպիսի հարցական զօրութեամբ գործածուած ժամանակը ամենեին տարբերութիւն չունի մինէ կամ մի ենէ մակրայէն , ինչպէս որ մեծ բառգըրքին մէջ ու անկէ գուրս գտնուած շատ վկայութիւններէ կ' իմացուի . մէնք մէկ քանին մէջ բերենք օրինակի համար . “ Ո՞ի զոր սիրեաց անձն իմ՝ տեսէք : — Ո՞ի ամեննեքեան մարդարէք : — Ո՞ի և ատեցեալ եղեր ’ի մէնջ : — Ո՞ի զշաւիզ յաւիտենականս պահեսցես : — Ո՞ի քահանայ հրամայես լինել , . և այն : Ի՞սա ասոնց մէջ կ' մակրայը ամեննեին տարբերութիւն չունի մինէն . իսկ արդ մինէն ըստ ինքեան բացասական է , ու կը նշանակէ կ' լիշտ նէ , կ' գուշէ , շըլլա նէ . այլ ուրիշ հարցականի հետ ստուխունին մը միայն կուտայ անոր . ապա ուրեմն ինքը բուն մեր հայերենին մէջ հարցական չէ տաճկի դին պէս , հապա ինչպէս մինէն՝ այսպէս ալ մին այսպիսի տեղուանք տաճկի աճապ կամ աճապա , ծնայա դի , դյէր , հիշ ու ասոնց նման մասնիկներուն նշանակութիւնը ունի . զոր օրինակ աճապա տէտին ի . — հյէր հէր չէս իեյշամուէր օլո . — օլայա դի կամ մէյէր՝ իշողի-մի-ղուէն շըդուն ևն :

1 Մէյէր կամ մէյէր բառը բուն պարսկերէն է , ու կը նշանակէ էլէ ու , և մինէ , ուրէու , իբ նէ . բայց տաճկերենին մէջ այնպիսի փափուկ նշանակութիւններ կուտայ քովի խօսքերուն որ հայերէն

լուսնկ “ Ո՞իթէ քա՞ր տայցէ նմա .. խօսքը՝ տաճկերէն կը թարգմանի , լուծապա դա՞լ նը վէրէր մնա , կամ հիշ մնա դա՞լ նը վէրէր . և կամ մէյէր դա՞լ վէրէ ունա , և այն :

Յուսանք որ աս պատճառներով և օրինակներով բաւական հասկըցուեցաւ թէ կ' մասնիկը մեր լեզուին մէջ հարցական չէ . ուստի մեր աշխարհաբառէն դուրս ձգելու է յստակութեամար : Եւ աղեկը ան է որ կ' ըրին շափ հարկաւորութիւն ալ չտեսնուիր ասոր վրայ . բայց թէ որ պէտք ըլլայ հարցական բային ուժը սաստիկացընել , ահա մինէ մակրայը կրնանք գործածել բայէն առաջ գնելով , և ամենեին իմաստին փափկութեանը վնաս մը չենք ըներ :

Ուրիշ մասնիկներուն վրայ ալ ուրիշ անգամ :

Հ . Գ . ԱՅԱ :

#### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ո էնետիո Հայոց Լրայ տեղեկութիւն :

Ո՞ւր ազգին գլխէն անցած զանազան փորձանքներուն ու թշուառութիւններուն մէկն ալ աս է որ մէկ մեծ մասը այլ և այլ պատճառներով ցիրուցան եղեր ու իր հայրենի սեպական երկրէն ելեր հետու տեղուանք գնացեր է խումբ խումբ . և ինչպէս որ իր հողէն ու օդէն զրկուած բոյս մը օտար հողի ու ջրի մէջ որ տնկուի նէ՝ կամ կը չորնայ և կամ կը ձոզի կ' այլանդակի , այսպէս ալ մեր ազգին մէկ մասը օտար ու հեռաւոր երկիրներ երթալով՝ կամ ազքը տցեր փացեր է , և կամ քիչցեր տկարացեր է ու օտար ազգաց հետ խառնուեր է : Ո՞ն խօսքը որ կ' ըսեն թէ “ լզբատն իր տան մէջ թագաւոր է , թագաւորն ուրիշի տան մէջ ազքատ է ” , միշտ թարգմանելը կամ բացատրելը գրեթէ անկարելի է :